ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՇՈՒՄ Գիտակրթական կենտրոն ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կատարող՝ Կարինե Բորիսի Բաղիյան

Գյումրու թիվ 29 հիմնական դպրոց ՊՈԱԿ
Հասարակագիտություն

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……3

§1 Ժողովրդավարության հիմնական բնութագրերը և բովանդակությունը……..…..10

§2 Ժողովրդավարական մշակույթի ակունքները…….…..13

ԱՄՓՈՓՈՒՄ……..……..…..15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……...……..…16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել ժողովրդավարությունը ոչ միայն քաղաքական, այլ նաև մշակութային ասպեկտով, քանի որ մշակույթը հասարակությանը վերաբերող ամենաընդգրկուն հասկացությունն է, և պետական, իրավական համակարգերը ևս մշակույթի արդյունք են: Հնարավոր է այդ համակարգերում արհեստականորեն ստեղծել ժողովրդավարություն, սակայն դրանք չեն կարող գործել առանց ժողովրդավարական մշակույթի, քանի որ ժողովրդավարության կարևոր բաղադրիչները՝ ազատ ընտրական իրավունքը, ազատ ստեղծագործական իրավունքը, բազմակարծությունը, մշակույթի արդյունք են և գործում են միայն ժողովրդավարական մշակույթի դեպքում: Թեման կարևոր է նաև այն պատճառով, որ հանրակրթական նոր չափորոշիչներում կարևոր տեղ է հատկացված կարողունակություններին:Դրանք ութն են , ժողթվրդավարական և քաղաքացիական կարողունակությունը դրանցից մեկն է:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու պարագրաֆներից՝

1. ժողովրդավարության հիմնական բնութագրերը և բովանդակությունը,

2. ժողովրդավարական մշակույթի ակունքները: Աշխատանքը վերջանում է ամփոփումով:

Առաջին պարագրաֆում՝»Ժողովրդավարության հիմնական բնութագրերը և բովանդակությունը», փորձ է արվել ներկայացնել ժողովրդավարությունը որպես մշակութային երևույթ: Սակայն քանի որ հիմականում լուսաբանվում է քաղաքական ժողովրդավարությունը, ժողովրդավարական մշակույթը հասկանալու համար ներկայացվել է քաղաքական ժողովրդավարությունը: Ժողովրդավարությունը ներկայացվել է որպես պետական քաղաքական կառուցվածքի մի ձև, որտեղ միակ լեգիտիմ աղբյուրը համարվում է ժողովուրդը: Որպես ժողովրդավարության գլխավոր հատկանիշ ներկայացվել են օրենքով ապահովված ընտրությունները:

Ժողովրդավարություն հասկացության գլխավոր բանաձևը»մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն» են: Քաղաքական ժողովրդավարության ելակետ ենք համարել Աթենական ժողովրդավարությունը:

Ներկայացվել է արևմտյան եվրոպական ժողովրդավարությունը՝»լիբերալ ժողովրդավարությունը», որի ձևերը կրում է ներկայիս ժողովրդավարական կառավարումը: Լիբերալ ժողովրդավարության գլխավոր նպատակն է համարվում բոլոր քաղաքացիներին հավասար իրավունքներով ապահովելը: Ներկայացված են լիբերալ ժողովրդավարության հիմնական սկզբունքները: Նշված են սկզբունքների մեջ ներառված ազատությունները

սահմանափակելու երեք պայմանները: Դրանից հետո միայն ներկայացվել է տարբեր հետազոտողների կողմից ժողովրդավարությանը տրված բնութագրերը՝ կոնֆլիկտների կարգավորման հավաքածու (ըստ Լարրի Դայմոնդի) և այլն:

Ներկայացվել է նաև կրթության դերը ժողովրդավարության հաստատման, պահպանման և զարգացման գործում: Ժողովրդավարական հասարակություններում կրթության բովանդակությունը և պրակտիկան աջակցում են ժողովրդավարական կառավարմանը: Կառավարությունը չպետք է դիտի կրթությունը որպես սովորողների գաղափարական մշակման միջոց: Դիտարկվել է ավտորիտար և ժողովրդավարական հասարակությունների կրթությունների տարբերությունը: Ավտորիտար հասարակությունները ձգտում են պասիվ համաձայնության տրամադրություն ստեղծել, իսկ ժողովրդավարական կրթության նպատակն է պատրաստել անկախ, ժողովրդավարության տեսությանը և պրակտիկային քաջատեղյակ քաղաքացիներ: Ժողովրդավարության համար անհրաժեշտ է ինքնակառավարման մարմիններ ստեղծել: Ժողովրդավարության դեպքում խնդիրների լուծումները փորձվում են իրական կյանքում և ենթակա են փոփոխությունների: Վերջում եզրակացություն է արվել:

Այս պարագրաֆը գրելու համար օգտագործվել են որոշ հատվածներ»История в Энциклопедии Дидро и д'Аламбера. Перевод и примечания Н.В.Ревуненковой. Под общей редакцией А.Д.Люблинской. Л.: "Наука", 1978» գրքից, Սերգեյ Գորոխովսկու»Демократичная культура» հոդվածից և այլն:

Երկրորդ պարագրաֆում՝»Ժողովրդավարական մշակույթի ակունքները», ներկայացվել է ժողովրդավարության ակունքների մասին երկու տեսակետ՝ հին հունական և նախնադարյան:

Ներակայացվել է միջնադարում ժողովրդավարական մշակույթի մասնակի վերազարթոնքը: Հակադրության մեջ են դրվել ավտորիտար և ժողովրդավարության արդյունքում ստեղծված էլիտաները: Ավտորիտար էլիտան մշակույթի էությունը տեսնում է նրա բարձրագույն ձեռքբերումների և գլուխգործոցների մեջ, իսկ ժողովրդավարության արդյունքում ստեղծված էլիտան մշակույթի մեջ տեսնում է ոչ մեծ ձեռքբերումների անընդհատ կուտակում: Ավտորիտար էլիտան ստեղծում է իր«էլիտար մշակույթը»: Նրանց բնորոշ է «հասարակական շփման ձևերի, զվարճանքի, խոսքի խիստ տարբերակվածությունը: Այս սկզբունքը գործում էր նաև կրոնական համակարգում, որի ներսում արմատական փոփոխություններն էլ ժողովրդավարական մշակույթի ձևավորման համար կարևոր խթան են հանդիսանում: Ժողովրդավարական մշակույթի խթան է համարվում նաև միջնադարում քաղաքային խմբերի ձևավորումը:

Ժողովրդավարական մշակույթի ձևավորմանը նպաստում են նաև փոփոխությունները արվեստում, գրականության մեջ և այլուր: Արվեստում ժողովրդավարական փոփոխությունների շրջանը անվանում են Վերածնունդ և Հյուսիսային վերածնունդ, որոնց բնորոշ էր»մոտիկության ռեալիզմը»: Դրա հիմնական էությունը իրերն ու մարդկանց իրական պատկերելն էր: Սրա շնորհիվ մարդ բացահայտում էր իր սովորական մարդկային գործունեության արժեքը: Այս երևույթին նպաստել է քաղաքային ժողովրդավարության վերելքը: Քաղաքային ժողովրդավարության վերելքը աստիճանաբար է տեղի ունենում, երբ անհատը հետզհետե բացահայտում է մշակութային, տնտեսական, քաղաքական կյանքի վրա իր ազդեցությունը:

Նշվել են տարբեր հետազոտողների կարծիքները ժողովրդավարության վերաբերյալ: Կան հետազատողներ, որոնք բացասական կարծիք ունեն ժողովրդավարության նկատմամբ: Օրինակ Բերդյանի կարծիքով ժողովրդավարական մշակույթի դեպքում մշակույթը կորցնում է իր որակը և արժեքը: Նա նաև նշում է, որ ժողովրդավարական դարաշրջանում տեղի է ունենում մշակույթի համահարթեցում. մշակույթը դառնում է քաղաքակրթություն:

Հոբսի կարծիքով ժողովրդավարությունը ամբոխավարների կառավարումն է, որոնք հետապնդում են իրենց անձնական շահերը: Ըստ նրա՝ իշխանության բաժանումը հասարակության համար կարող է կործանարար լինել: Ժան-Ժակ Ռուսսոն հանդես է գալիս որպես ժողովրդավարության պաշտպան: Նրա կարծիքով իրավական իշխանության մեջ բոլոր քաղաքացիների մասնակցությունը բացառում է այնպիսի որոշումների ընդունումը, որոնք կարող են վնասել առանձին անհատների: Կանտը ուղղակի ժողովրդավարության կոչ չի անում, սակայն գտնում է, որ հասարակությունը պետք է օգտագործի իր գիտակցությունը, որի շնորհիվ հետզհետե կդառնա առավել ընդունակ: Նրա կարծիքով որոշումներ կայացնելիս պետությունը պետք է հաշվի առնի հասարակության կամքը: Որոշակի անդրադարձ է կատարվել նաև ժողովրդավարության մասին Մոնտեսքյոյի օրենքներին: Նա ժողովրդավարության հիմնական օրենքը համարում է ժողովրդի օրինաստեղծ լինելը: Նրա կարծիքով ժողովրդավարության դեպքում հասարակությունը որոշ առումով թագավոր է, որոշ առումով ենթակա: Ըստ Մոնտեսքյոյի՝ ժողովրդավարության համար չարիք կարող է դառնալ անհավասարությունը և չափից ավելի հավասարությունը:

Երկրորդ պարագրաֆը գրելու համար օգտագործվել են Վ. Ս. Ներսեսյանցի»Ш. Монтескье - Право и закон, Теория государства и права», Վ. Ե. Սատիշովի»Учение Т. Гобба о государстве и

праве», Պ. Գուրևիչի»Философия культуры» գրքերը, nmnby.eu ինտերնետային հասցեի»Обучение демократии: свободолюбие (мировой опыт)» տեղեկատվությունը և այլն:

Ամփոփման մեջ փորձել ենք ներկայացնել քաղաքական ժողովրդավարության և ժողովրդավարական մշակույթի փոխկապակցվածությունը:

§1 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ և ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մշակույթը իր մեջ պարունակում է բազմաթիվ գաղափարախոսություններ, որոնք ստեղծվում են հասարակական հարաբերությունները կարգավորելու համար: Ժամանակի ընթացքում այդ գաղափարախոսությունները տարբեր պատճառներով փոփոխությունների կարիք են զգում: Ժողովրդավարությունը առաջին հերթին գաղափարախոսություն է: Այդ գաղափարախոսությունից է կախված պետական իշխանության կառավարման ձևը: Սակայն պետությունն իր մեջ ներառում է հասարակական կազմակերպության ամենատարբեր ձևեր, որոնք ունեն իրենց կառավարման ներքին համակարգը: Ժողովրդավարությունը վերաբերվում է ոչ միայն պետական համակարգին, այլ նաև հասարակական կազմակերպության ամենատարբեր ձևերին՝ ընտանիք, համայնք և այլն, որտեղ որոշումներ կայացնելիս հաշվի է առնվում մեծամասնության կարծիքը:

Ժողովրդավարության դեպքում իշխանության միակ լեգիտիմ աղբյուրը համարվում է ժողովուրդը: Ժողովրդի կողմից պետության կառավարումը իրականացվում է կամ ուղղակի

(ուղղակի ժողովրդավարություն), կամ էլ անուղղակի (ներկայացուցչական ժողովրդավարություն):

ժողովրդավարության գլխավոր հատկանիշը օրենքով ապահովված ընտրություններն են, ինչպես նաև քաղաքացիների անխախտելի իրավունքները, որոնք իրենց մեջ ներառում են փոքրամասնությունների շահերի պաշտպանության մեխանիզմ, այսինքն՝ մեծամասնության իշխանություն, փոքրամասնության իրավունքներ:

Ժողովրդավարություն հասկացության գլխավոր բանաձևը»մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն» են:»Իրավունքները» օրենքով կարգավորվող ազատություններն են, իսկ»ազատությունները» ազատության ձև է, որը անհրաժեշտ է կենցաղային օգտագործման համար և հասարակական հայեցակարգի անքակտելի մասն է կազմում:

Ժողովրդավարության ելակետը ուղիղ ժողովրդավարությունն էր հին Հունաստանի քաղաք-պետություններում (Աթենական դեմոկրատիա):

Ժողովրդավարության քննադատությանը հանդիպում ենք Պլատոնի»Պետություն» երկխոսության մեջ, որտեղ ժողովրդավարության գլխավոր թերությունը համարվում է պաշտպանության թույլ հնարավորությունը: Նրա կարծիքով ժողովրդավարությունը անշնորհակալ ամբոխի իշխանությունն է, որը շատ արագ հանգեցնում է տիրանիայի: Թույլ պաշտպանվածությունը վերաբերվում է նաև ժողովրդավարության ժամանակակից ձևերին, չնայած ժամանակակից որոշ հեղինակներ հուսով են, որ տեխնիկական առաջընթացը ժողովրդավարությունը դարձնում է առավել կենսունակ:

Ներկայումս ժողովրդավարական կառավարումը կրում է արևմտյան եվրոպական ներկայացուցչական ժողովրդավարության ձևերը, որն ունի»լիբերալ ժողովրդավարություն» անվանումը: Նրա տեսական հիմնադիրները եղել են Ժան Ժակ Ռուսսոն (1712-1778), Ջոն Լոկկը (1632-1704) և Մոնտեսքյոն (1689-1755):

Լիբերալ ժողովրդավարությունը՝ բազմիշխանությունը, իրավական պետության ձև է, որը հիմնված է ներկայացուցչական ժողովրդավարության վրա, որտեղ մեծամասնության կամքը և ընտրված ներկայացուցիչների իշխանություն իրականացնելու հնարավորությունը սահմանափակվում են հանուն փոքրամասնության իրավունքների և առանձին քաղաքացիների ազատությունների: Լիբերալ ժողովրդավարության գլխավոր նպատակն է բոլոր քաղաքացիներին ապահովել հավասար իրավունքներով: Լիբերալ ժողովրդավարության ամենաբնորոշ տարրը»բաց հասարակությունն» է, որի գլխավոր սկզբունքը բազմակարծությունն է:

Լիբերալ ժողովրդավարության դեպքում անխախտելի է համընդհանուր ընտրական իրավունքը, որը յուրաքանչյուր չափահաս քաղաքացու տալիս է քվեարկելու հավասար հնարավորություն՝ անկախ սեռից, ռասսայական պատկանելությունից, կրթությունից և նյութական կարողությունից:

Լիբերալ ժողովրդավարության գլխավոր սկզբունքներն են

- Կյանքի և անձի արժանապատվության իրավունք
- Խոսքի ազատություն
- Մասսայական տեղեկատվության միջոցների ազատություն և տեղեկատվության այլընտրանքային աբյուրների հասանելիություն
- Հավատքի և հրապարակայնորեն կրոնական հայացքները արտահայտելու ազատություն
- Քաղաքական, մասնագիտական կամ այլ կազմակերպությունների մեջ միավորվելու իրավունք
- Հավաքների և ազատ հասարակական քննարկման ազատություն
- Ակադեմիական ազատություն
- Անկախ արդարադատություն
- Օրենքի առաջ հավասարություն
- Անձնական կյանքի անձեռնմխելիություն և անձնական գաղտնիք ունենալու իրավունք
- Մասնավոր սեփականություն ունենալու իրավունք
- Տեղափոխման ազատություն և աշխատանքի վայրը փոխելու իրավունք
- Կրթության իրավունք
- Հնարավորության հավասարություն:

Նշված ազատություններից որոշները սահմանափակ են, սակայն բոլոր սահմանափակումները հնարավոր են միայն երեք պայմանի դեպքում՝

1. պետք է համապատասխանեն օրենքին
2. պետք է ունենան արդարացված նպատակ
3. ադեկվատ և անհրաժեշտ պետք է լինեն այդ նպատակին հասնելու համար:

Արդարացված նպատակներից են անձի արժանապատվությունը, ազգային անվտանգությունը, հասարակական կարգը, առողջությունը, բարոյականությունը և այլն: Որոշ սահմանափակումներ հարկադրված են, որպեսզի քաղաքացիների մի մասի իրավունքները չոտնահարեն այլ քաղաքացիների ազատությունները:

Ժողովրդավարության բաղկացուցիչները.

- Քաղաքացիների մասնակցությունը երկրի կառավարմանը (քաղաքացու հիմնական գործունեությունը)
- Հավասարության սկզբունքի պահպանում
- Քաղաքական հանդուրժողականություն
- Իշխանության պատասխանատվություն ժողովրդի հանդեպ
- Իշխանության թափանցիկություն
- Կանոնավոր, ազատ և արդար ընտրություններ (ժողովրդի կամքի արտահայտման միջոց)
- Տնտեսական ազատություն (մասնավոր սեփականություն, արհմիություններ և ազատ շուկա)
- Հսկողություն իշխանության չարաշահման նկատմամբ
- Իրավունքների մասին հռչակագիրը որպես սահմանադրության մաս, որն ապահովում է քաղաքացիների իրավունքները
- Պարտվողների կողմից ընտրությունների արդյունքների ընդունում
- Մարդու իրավունքների և արժանիքների ճանաչում
- Բազմակուսակցական համակարգ
- Օրենքի իշխանություն:

Մարդկանց բնորոշ են տարբեր, երբեմն հակասական ցանկություններ: Մարդկանց հարկավոր է անվտանգություն, սակայն նրանք սիրում են արկածներ. նրանք ձգտում են անհատական ազատության, սակայն պահանջում են հասարակական արդարություն: Այդ առումով ժողովրդավարությունը ոչնչով չի տարբերվում, և կարևոր է հասկանալ, որ այդ հակասություններից և նույնիսկ պարադոքսներից շատերը գոյություն ունեն ժողովրդավարական յուրաքանչյուր հասարակությունում:

Ժողովրդավարությունը շատ դեպքերում ավելին չէ քան կոնֆլիկտների կարգավորման կանոնների հավաքածու: Միևնույն ժամանակ կոնֆլիկտը հարկավոր է կարգավորել որոշակի սահմանափակումներով և արդյունքը պիտի լինի փոխզիջումը, կոնսենսուսը կամ էլ այլ համաձայնություններ, որոնք համարվում են օրինական:

Գիտնական և գրող Լարրի Դայմոնդի կարծիքով կոնֆլիկտի և կոնսենսուսի միջև գոյություն ունի մի պարադոքս: Եթե խմբերը ժողովրդավարությունը ընկալում են որպես իրենց պահանջները իրականացնելու միջոց, ապա հասարակությունը կարող է ներսից քանդվել: Եթե

կառավարությունը չափից ավելի ճնշում է գործադրում կոնսենսուսի հասնելու համար՝ խլացնելով ժողովրդի ձայնը, հասարակությունը կարող է քանդվել վերևից:

Չկան կոնֆլիկտ-կոնսենսուսի հավասարեցման պարզ որոշումներ: Ժողովրդավարությունն ինքն իրեն աշխատող մեքենա չէ, թեկուզ եթե նրա մեջ դնեն ճիշտ սկզբունքներ: Ժողովրդավարական հասարակությանը հարկավոր է քաղաքացիների նվիրվածությունը, որոնք ընդունում են քաղաքական և բանականության կոնֆլիկտների անխուսափելիությունը: Այս տեսանկյունից պետք է ընդունել, որ ժողովրդավարական հասարակության շատ կոնֆլիկտներ առաջանում են ոչ թե խիստ արտահայտված»ճիշտ» և»սխալ» դիրքորոշումների միջև, այլ ժողովրդավարական իրավունքի տարբեր բացատրությունների դեպքում:

Ազատությունը մարդկանց հնարավորություն է տալիս ապրել խաղաղ անձնական կյանքով:

Կրթության և ժողովրդավարական արժեքների միջև գոյություն ունի ուղիղ կապ. ժողովրդավարական հասարակություններում կրթության բովանդակությունը և պրակտիկան աջակցում են ժողովրդավարական կառավարմանը: Այս գործընթացը խիստ կարևոր է ժողովրդավարության համար, քանի որ ժողովրդավարությունն իրենից ներկայացնում է պետական կառավարման դինամիկ, զարգացող ձև, որը պահանջում է քաղաքացիների ինքնուրույն մտածողություն: Հասարակական և քաղաքական դրական փոփոխությունների հնարավորությունը քաղաքացիների ձեռքում է: Կառավարությունը չպետք է դիտի կրթությունը որպես սովորողների գաղափարական մշակման միջոց:

Ի տարբերություն ավտորիտար հասարակությունների, որոնք ձգտում են տարածել պասիվ համաձայնության տրամադրություն՝ ժողովրդավարական կրթության նպատակն է պատրաստել անկախ, հարցեր տվող և միաժամանակ ժողովրդավարության տեսությանը և պրակտիկային քաջատեղյակ քաղաքացիներ: Չեստեր Ֆինն կրտսերը նշել է.»Մարդիկ կարող են ծնվել անձնական ազատության նկատմամբ մոլուցքով, բայց չունենան սոցիալական և քաղաքական մեխանիզմների մասին գիտելիքներ, որոնք ժամանակի ընթացքում ազատությունը դարձնում են նրանց և նրանց երեխաների համար հնարավոր: Այդ բաները պետք է ձեռք բերել: Դրանք պետք է սովորել»: Ժողովրդավարությանը սովորելը սկսվում է դպրոցից և շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում:

Ժողովրդավարության սահմանադրականությունը այն հիմքն է, որի վրա հենվելով՝ հասարակությունը գաղափարների բախման և կոմպրոմիսի շնորհիվ ձգտում է ճշմարտության:

Գաղափարները և խնդիրների լուծումները չեն ստուգվում խիստ գաղափարախոսությամբ, փորձվում են իրական կյանքում, որտեղ դրանք կարող են փոփոխվել, ընդունվել կամ էլ մերժվել:

Ժողովրդավարության կարևոր սկզբունքներից է նաև ինքնակառավարումը: Ինքնակառավարումը միշտ չէ, որ կարող է կանխել սխալները, վերջ դնել ազգամիջյան վեճերին կամ էլ ապահովել տնտեսական զարգացում: Սակայն այն կարող է հնարավորություն ընձեռել տնտեսական աճի համար, ապահովել սոցիալական զարգացում և անձնական ինքնաարտահայտում:

Ռուս բանաստեղծ Իոսիֆ Բրոդսկին գրել է.»Երբ ազատ մարդն անհաջողության է հանդիպում, դրանում ոչ ոքի չի մեղադրում»: Սա ճիշտ է նաև ժողովրդավարական պետության քաղաքացիների համար:

Որոշ հետազոտողների կարծիքով `

1. Ժողովրդավարության իրականացման համար անհրաժեշտ է հասարակական խնդիրների քննարկման համար ունենալ համապատասխան վայր և ամրագրված ժամկետ:
2. Պետք է ընդունել, որ ամբողջ ժողովի կարծիքը համարվում է ձայների մեծամասնությունը, հակառակ դեպքում հնարավոր չէ որևէ որոշում կայացնել, քանի որ չի կարող լինել բացարձակ միակարծություն:
3. Ժողովրդավարության հաստատման համար շատ կարևոր է ունենալ քաղաքային վարչություններ, որոնք ծայրահեղ իրավիճակներում կհրավիրեն ժողովրդական հավաքներ:
4. Անհրաժեշտ է հասարակությանը բաժանել որոշակի դասերի, որից էլ կախված է ժողովրդավարության տևողությունը և զարգացումը:

Ընտրական իրավունքը հանդիսանում է ժողովրդավարության հիմքը: Ժողովրդավարության հաջորդ կարևոր օրենքը ընտրության ձևն է, իսկ երրորդը՝ ձայն տալու ձևը: Շատ հաճախ վեճեր են առաջանում քվեարկության բաց կամ փակ լինելու շուրջ:

Ժողովրդավարության մեջ ժողովուրդը պետք է լինի օրինաստեղծ: Այն պետք է ընդունի սենատը, սակայն մինչև հաստատվելը օրենքը պետք է փորձարկվի:

Այս կառավարման համակարգը պահպանելու կարևոր սկզբունքը առաքինությունն է:

Ժողովրդավարական մշակույթը մշակույթի ժողովրդավարական կառավարումը չէ, այլ ժողովրդավարական մասնակցությունը: Հետևաբար ժողովրդավարական մշակույթը մասնակցության մշակույթն է: Ակտիվ մասնակցության նման հնարավորությունը մշակութային գործընթացներին մասնակցելու նոր ցանկություն է առաջացնում: Ժողովրդավարական

մշակույթում ազատությունը ոչ միայն մասնակցության հնարավորությունն է, այլև տարածելու, ազդելու և խառնելու հնարավորությունը:

Եթե քաղաքական ժողովրդավարության դեպքում իշխանությունն ընտրվում է մեծամասնության կողմից և պարտադրվում բոլորին, ժողովրդավարական մշակույթի դեպքում յուրաքանչյուր քաղաքացի կարող է ընտրել իր մշակույթը և չենթարկվել մեծամասնության կամքին: Սակայն քանի որ մշակույթի զարգացումը կապված է նաև ֆինանսական միջոցներից, այս հարցը շատ վիճելի է դառնում: Եթե մշակույթը ֆինանսավորի պետությունը, ապա որքան էլ ցանկանա ժողովրդավար լինել, միևնույն է մշակույթը կդառնա հասարակության գաղափարական կրթման միջոց, որը հակասում է ժողովրդավարության սկզբունքներին: Իսկ եթե հասարակությունն ինքը ֆինասավորի մշակույթը, ապա փոքրամասնության մշակույթը կտարալուծվի ընդհանուրի մեջ այն պատճառով, որ մեծամասնությունը ավելի մեծ ֆինանսական միջոցներ կտրամադրի իր մշակույթին, որի հետևանքով այդ մշակույթին ծառայողների թիվը կմեծանա, դրա հետևանքով էլ կմեծանա մրցակցությունը, և մեծամասնության մշակույթը ավելի որակյալ կդառնա: Սրա հետևանքով մշակույթը կդառնա մասսայական, որը վտանգում է ժողովրդավարական մշակույթի բազմազանության սկզբունքը:

Ժողովրդավարական մշակույթի ամենակարևոր սկզբունքը ստեղծագործական ազատությունն է: Քանի որ ստեղծագործական ազատության սկզբունքով ժողովրդավարությունը չի պարտադրում մշակույթի հատուկ ձև, այն կարելի է դիտարկել որպես մշակույթի զարգացման մոդել, որին բնորոշ է՝

1.արագընթաց զարգացումը. Ժողովրդավարական պետություններում յուրաքանչյուր նոր սերունդ նոր ժողովուրդ է (Ալեքսիս դե Թոքվիլ):

2.բազմազանությունը:

§2 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Ընդունված է դիտարկել ժողովրդավարական մշակույթի երկու ակունք՝

1. նախնադարյան
2. հին հունական:

Առաջին տեսակետը մարքսյան տեսակետն է, որի համաձայն ժողովրդավարությունը բնորոշ էր նախնադարյան հասարակություններին: Բայց այս տեսակետը վիճելի է, քանի որ ժողովրդավարությունը ասոցացվում է պետության հետ, ինչը չկար նախնադարում:

Սակայն այս տեսակետը ժողովրդավարական մշակույթի համար առավել ցանկալի է, քանի որ այս դեպքում ընդունում ենք, որ ժողովրդավարությունը մարդու բնության մեջ է, և առանձին հասարակությունների ոչ ժողովրդավարական մշակույթները կապված են արտաքին ազդակներից, և դրանց հաղթահարման դեպքում ժողովրդավարական մշակույթը միակ ճանապարհը կլինի:

Երկրորդ տեսակետի համաձայն՝ ժողովրդավարական մշակույթի ակունքները հասնում են մինչև հունական քաղաք-պետությունները:

Հունական քաղաք-պետություններից հետո տևական մի ժամանակաշրջան ժողովրդավարությունը մոռացության էր մատնված: Միջնադարից սկսած կարելի է նկատել ժողովրդավարական մշակույթին բնորոշ որոշ տարրերի առաջացում: Այն հակադրվում էր միջնադարյան էլիտար և կրոնական մշակույթին:

Իրենց»հերոսական» և անհատապաշտական պատկերացումներից ելնելով՝ ավտորիտար էլիտայի ներկայացուցիչները մշակույթի էությունը տեսնում են նրա բարձրագույն ձեռքբերումների և գլուխգործոցների մեջ: Ըստ նրանց՝ մշակույթի արժեքը որոշում են հանճարների ստեղծագործությունները: Մշակույթը ընկալվում է որպես ստեղծագործ հանճարի առանձին նվաճում:Այլ կերպ է գնահատում մշակույթը ժողովրդավարության արդյունքում ստեղծված էլիտան: Նրանք հակված են մշակույթի մեջ տեսնելու ոչ մեծ ձեռքբերումների անընդհատ կուտակում: Նրանք պնդում են, որ առանձին խմբերի և ողջ մարդկության պատմությունը ավելի շատ կախված է հասարակությունից, քան հազվագյուտ մարդու հանճարից:

Այնտեղ, որտեղ մտավոր էլիտան գոյություն ունի հասարակությունից դուրս, նրանց կողմից մշակված գաղափարները ձեռք են բերում ռոմանտիկական բնույթ: Այդպիսի մտավորականները պաշտամունքային են դարձնում արժեքների համակարգը, որը հեռու է շարքային մարդկանց շահերից:

Էլիտայի ներկայացուցիչները իրենց ավելի բարձր են դասում և ձգտում են ստեղծել իրենց»էլիտար մշակույթը»: Նրանց բնորոշ է հասարակական շփման ձևերի, զվարճանքների, խոսքի տարբերակվածությունը, որը անհասանելի է»ցածր» մարդկանց: Դրա հետևանքով էին կրոնավորները օգտագործում հատուկ լեզու: Սեփական լեզվի օգտագործումը պատարագներում կամ էլ գրականության մեջ կարևոր խթան է հանդիսանում ժողովրդավարական մշակույթի ձևավորման համար:

Ըստ Կ. Մանհեյմի՝ սխալ կլիներ արևմտյան պատմությունը դիտարկել «նախաժողովրդավարությունից» մինչև «ժողովրդավարություն»: Մենք կարող ենք միջնադարը դիտարկել որպես հունական քաղաք-պետությունների քաղաքային և ռացիոնալիստական միտումներով անորոշ զարգացում:

Մշակութային ժողովրդավարացումը սկսվել է ուշ միջնադարում, երբ եվրոպական մշակույթում գերակշռող դարձան քաղաքային խմբերը: Սակայն դրանից հետո ի հայտ եկավ հակառակ միտումը՝ ֆեոդալիզմի վերականգնում:

Ուշ միջնադարի ժողովրդավարացման գործընթացի հիմքում ընկած էին սոցիալական փոփոխությունները: Այս շրջանում մեծ փոփոխություններ են նկատվում արվեստի, կրոնի և գրականության մեջ: Ուշ մջնադարյան արվեստում 1370-ական թթ.-ից սկսեց գերակշռել այսպես կոչված»մոտիկության ռեալիզմը»: Դրա էությունն այն էր, որ իրերը ներկայացվում են այնպես, ինչպես գոյություն ունեն իրական կյանքում և մարդկային գործունեության մեջ: Դրանում կար բոլորովին նոր վերաբերմունք. մարդու հեղափոխական ինքնահաստատում, որը բացահայտում է իր սովորական մարդկային գործունեության արժեքը: Այս երևույթը կապված է քաղաքային ժողովրդավարության վերելքի հետ, երբ անհատը բացահայտում է քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի վրա իր ազդեցության անընդհատ ընդարձակվող ոլորտներ:

Կան հետազոտողներ, որոնք բացասական վերաբերմունք ունեն ժողովրդավարական մշակույթի նկատմամբ: Ըստ Ն. Ա. Բերդյանի՝ մշակույթի ժողովրդավարացման հետևանքով ընկնում է նրա որակը և արժեքը: Մշակույթը դառնում է ավելի պարզունակ, մատչելի, ավելի օգտակար ու հարմար, ինչպես նաև ավելի ցածրորակ ու ոճից զրկված:

Ըստ Բերդյանի՝ մշակութային վերելքը բնորոշ էր անցյալին, այլ ոչ թե ժողովրդավարական դարաշրջանին, որտեղ ավելի շատ տեղի էր ունենում համահարթեցում, այսինքն՝ մշակույթը դառնում էր քաղաքակրթություն:

Ըստ Հոբսի՝ արիստոկրատական կամ ժողովրդավարական պետություններում քաղաքացիները պետք է ենթարկվեն ոչ պակաս քան միապետության դեպքում:

Ըստ Հոբսի՝ ժողովրդավարությունը ամբոխավարների կառավարումն է, որոնք հետապնդում են իրենց անձնական շահերը: Հոբսը իշխանության բաժանումը համարում է հասարակության համար կործանարար: Ըստ նրա՝ իշխանության որևէ սահմանափակումն անպայման կհանգեցնի քաղաքացիական պատերազմի, տարբեր ուժերի բախման և վերջապես՝ պետության կործանման: Ըստ նրա՝ պետական հսկողություն պետք է լինի ոչ միայն քաղաքացիների արտաքին գործունեության նկատմամբ, այլ նաև ներքին. պետությունը վերահսկում է քաղաքացիների համոզմունքները և տեսակետները, իրականացնում է խիստ գրաքննություն, կարգավորում է կրոնական հարցեր և այլն:

Ֆրիդրիխ Նիցշեն նշում էր, որ կարելի է բազմաթիվ տարբերություններ գտնել արիստոկրատական և ժողովրդավարական մշակույթների միջև, սակայն նա ատելությամբ էր արտահայտվում ժողովրդավարական մշակույթի մասին:

Կանտը անհրաժեշտ է համարում, որ հասարակությունը օգտագործի իր գիտակցությունը, քանի որ այդ դեպքում հետզհետե հասարակությունը ազատ գործելու համար դառնում է առավել ընդունակ, իսկ պետությունը սկսում է իր համար առավել շահավետ համարել մարդուն վերաբերվել որպես ավելիին, քան մեքենան է: Կանտը պետության գործերին քաղաքացիների ուղղակի մասնակցության կոչ չի անում, այլ գտնում է, որ պետությունը պետք է առաջնորդվի քաղաքացիների ընդհանուր կամքով:

Ժան-Ժակ Ռուսսոն մշակել է հավաքական ժողովրդավարության մոդել, որտեղ ժողովուրդը դիտարկվում է մի ամբողջություն, որը օժտված է»ընդհանուր կամքով» մինչև իր ձևավորումը և հրապարակային արտահայտումը: Ողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին, որը ձևավորվում է ազատ և իրավահավասար անհատների՝ պետության մեջ ինքնակամ միավորվելու ճանապարհով: Նա գտնում էր, որ իրավական իշխանության մեջ բոլոր քաղաքացիների մասնակցությունը բացառում է այնպիսի որոշումների ընդունումը, որոնք կարող են վնաս հասցնել առանձին անհատների: Ժողովուրդը չի կարող սխալվել իր շահերի հարցում: Ընդունվող օրենքները»ընդհանուր կամքի» արտահայտումն են:

Իտալացի փիլիսոփա և իրավաբան Վիկո Ջամբատտիստան մշակում է մի տեսություն, որը կոչում է»իդեալական հավերժ պատմություն», որտեղ նա ձգտում է ապացուցել, որ անիմաստ են կառավարման ամենալավ ձևի մասին վեճերը, քանի որ յուրաքանչյուր ազգի կյանքում նկատվում են մշակութային, հասարակական, քաղաքական զարգացման և անկման գործընթաց: Նա առանձնացնում է երեք դարաշրջան.

1.աստվածների դարաշրջան. բնորոշ է մարդկային հասարակության զարգացման վաղ շրջանին: Այս դարաշրջանին բնորոշ է կառավարման այնպիսի ձևը, ինչպիսին է թեոկրատական բռնապետությունը:

2.հերոսների դարաշրջան. այս դարաշրջանում կառավարում է արիստոկրատիան:

3.մարդկանց դարաշրջան. հասարակությունը հասնում է մարդու քաղաքացիական իրավունքների հավասարության գիտակցմանը: Այստեղ կառավարման ձևը ժողովրդավարությունն է կամ միապետությունը: Սակայն փիլիսոփան նշում է, որ պետության այս ձևը չի կարող երկար գոյատևել և պահպանել իրեն:

Դրանից հետո գալիս է վերջին դարաշրջանը՝ վայրագությունը, որի ժամանակ մարդկանց եսասիրական հետաքրքրությունները առաջ են անցնում օրենքներից, որոնք ապահովում են հասարակական կապերը, առաջանում է հասարակական անիշխանություն, որը վերջ է դնում հասարակական զարգացմանը և պայմաններ է ստեղծում նոր շրջանի առաջացման համար: Հետևաբար ամեն ինչ կանխորոշված է և իմաստ չունի ժողովրդավարության կամ այլ ձևերի մասին դատողություններ անել:

Ժողովրդավարության համար օրենքների մասին Մոնտեսքյոն նշում է՝

գ Ժողովրդավարության դեպքում ժողովուրդը որոշ առումով թագավոր է, որոշ առումով ենթակա: Թագավոր է միայն քվեարկության ուժով, որով արտահայտում է իր կամքը: Թագավորի կամքը հենց թագավորն է: Ուստի այն օրենքները, որոնք որոշում են քվեարկության կանոնները, ժողովրդավարական կառավարման համար ամենակարևորն են:

գ Ժողովրդավարության հիմնական օրենքն է. օրենքներ հրատարակելու իշխանությունը պատկանում է ժողովրդին:

գ Այսպիսի կառավարման հիմնական սկզբունքն է. հասարակությունը կարող է վերահսկել այլ անձանց գործունեությունը, սակայն ինքը չի կարող կառավարել:

գ Ժողովրդավարական պետությունում հասարակությունը բաժանված է որոշակի դասերի: Այդ բաժանման ճշտությունից էլ կախված է ժողովրդավարության տևողությունը և զարգացումը:

գ Ժողովրդավարության հաջորդ կարևոր օրենքը ընտրության ձևն է: Շատ հաճախ վեճեր են առաջանում քվեարկության բաց կամ փակ լինելու շուրջ:

գ Ժողովրդավարության ոգին խաղաղությունն է և մեղմությունը:

Ժողովրդավարության համար չարիք կարող է դառնալ

գ Անհավասարությունը (կարող է հանգեցնել մեկի կառավարմանը)

գ Չափից ավելի հավասարությունը (տանում է դեպի տիրանիա): Յուրաքանչյուրը ցանկանում է հավասար լինել նրան, ում ընտրել է որպես ղեկավար: Ազատությունը իրավունք է տալիս անել այն, ինչ թույլատրելի է օրենքով:

Ժողովրդավարությունն իր մեջ ներառում է վերահսկողության մեխանիզմ: Վտանգավոր է ոչ թե ժողովրդավարությունը, այլ նրա ներսում գտնվող որևէ համակարգի չափից ավելի զարգացումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժողովրդավարության դեպքում քաղաքացիներն են ընտրում զարգացման ճանապարհը, իսկ պետությունն էլ կազմակերպողի դերում է հանդես գալիս, հետևաբար մշակույթի զարգացումը պետք է միայն հասարակության կամքին համապատասխան լինի: Օրենքները կարգավորում են քաղաքացիների միջև փոխհարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիների և պետության միջև համագործակցությունը, սրանից է կախված ժողովրդավարությունը, հետևաբար քաղաքացիները պետք է օրինաստեղծ լինեն: Քաղաքացիները իրենց մշակույթին համապատասխան են ստեղծում տարբեր փոխհարաբերություններ կարգավորող օրենսդրական նորմեր: Ժողովրդավարական մշակույթի դեպքում հասարակական և իրավական նորմերի միջև տարբերություն գրեթե չկա: Ժողովրդավարական հասարակության ներսում գտնվող ոչ բոլոր մշակույթները կարող են ժողովրդավարական լինել, սակայն ժամանակի ընթացքում սահմանադրական նորմերը կարող են փոխել նաև այս մշակույթները:

Հնարավոր է, որ պետությունը լինի ժողովրդավարական կառուցվածքով, սակայն հասարակությունը չունենա ժողովրդավարական մշակույթ, որի դեպքում պետությունը պետք է ստեղծի օրենսդրական նորմեր, հետևի, որ դրանց խախտման դեպքում պատիժը անխուսափելի լինի: Ոչ ժողովրդավարական մշակույթ ունեցող հասարակություններում պետության իրավունքները պետք է մի փոքր ավելի շատ լինեն, քան ընդունված է ժողովրդավարության դեպքում, սակայն այնքան շատ չպետք է լինի, որ վերածվի բռնապետության: Ժողովրդավարության կայացման համար շատ կարևոր է հավատը ժողովրդավարության նկատմամբ, այսինքն՝ հավատը, որ ապրում են ժողովրդավարական պետությունում: Դա ապահովության և վստահության զգացում է առաջացնում:

Պետությունը պետք է կարողանա մշակույթը ժողովրդավարական դարձնել, այսինքն՝ հասարակության ու իշխանության միջև այնպիսի հարաբերություններ ու նորմեր ձևավորի, որոնք այլ ոլորտներում կկարողանան ապահովել ստեղծագործական ազատություն, հասարակական արժեքների մատչելիություն: Այս դեպքում էլ շատ կարևոր են ժողովրդավարական ընտրությունները, որպեսզի հասարակությունը համաձայնվի համագործակցել պետության հետ:

Պետությունը կարող է պաշտպանել ազատ ստեղծագործական իրավունքը, բազմակարծությունը և ազատ ընտրելու իրավունքը, սակայն հասարակության մեջ ժողովրդավարական մշակույթի բացակայության դեպքում դրանք կարող են չօգտագործվել: Այսինքն՝ միայն քաղաքական ժողովրդավարությունը բավական չէ, որպեսզի ժողովրդավարություն ստեղծվի:

Ժողովրդավարական հասարակություններում գնահատվում, օգտագործվում և վերարժևորվում են այլ հասարակությունների ստեղծած մշակութային արժեքները: Սա հարստացնում է մշակույթը և դարձնում է բազմազան: Արվեստում ստեղծվում են նոր ուղղություններ, գիտական հայտնագործությունների նկատմամբ վախը վերանում է և այլն, որի շնորհիվ մշակութային նոր երևույթները արագ ընկալվում և օգտագործվում են հասարակության կողմից, ինչը արագ փոխում և զարգացնում է մշակույթը: Համաշխարհային մրցակցության պայմաններում այս արագ զարգացումը պարտավորեցնում է պետություններին ժողովրդավարական մշակույթը որպես զարգացման հիմք ընդունել: Գիտակցելով ժողովրդավարության՝ զարգացման կարևորագույն նախապայման լինելու հանգամանքը՝ հաճախ այն սկսում են օգտագործել իրենց ազդեցությունը տարածելու համար:

Ժողովրդավարության կարևոր սկզբունքը ազատ ստեղծագործական իրավունքն է: Սա ոչ միայն թույլ է տալիս յուրաքանչյուր քաղաքացու ազատ ստեղծագործել, այլև յուրաքանչյուր նոր երևույթի նկատմամբ ունենալ առողջ դատողություն, ինչը բնորոշ չէ այլ հասարակություններին, որոնք ստեղծում են»փակ մշակույթ»: Ժողովրդավարական մշակույթը»բաց մշակույթ» է:

Ազատ ստեղծագործական իրավունքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին աշխատանքով ու գաղափարներով ներդրում ունենալ մշակույթի մեջ, ինչը այլ տիպի հասարակություններում կարող էին շատ քիչ անհատներ: Դրանցում յուրաքանչյուր մշակութային նոր երևույթ ստեղծվում էր ելնելով խիստ անհրաժեշտությունից, իսկ ժողովրդավարական հասարակությունը ստեղծում է տարբեր մշակույթներ, որոնք կարող են միաժամանակ գոյատևել: Դրանք հանձնվում են հասարակության քննությանը: Ժողովրդավարության դեպքում հասարակությունը փորձերից չի վախենում:

Կարծիք կա, որ ժողովրդավարության և հատկապես լիբերալ ժողովրդավարության դեպքում վտանգվում է միասնականությունը: Բայց այս տեսակետը չենք կարող միանշանակ ընդունել: Բազմակարծության շնորհիվ միևնույն հասարակությունում ստեղծվում են տարբեր ենթամշակույթներ, մշակույթներ: Սակայն տարբեր ենթամշակույթների ստեղծումը պայմանավորված է ոչ միայն ժողովրդավարությամբ, այլև բազմաթիվ այլ գործոններով: Իրականում ժողովրդավարությունը ավելի միասնական է դարձնում այդ ենթամշակույթները: Ոչ ժողովրդավարական մշակույթում աստիճանակարգում կա նաև ենթամշակույթների միջև, որի հետևանքով իրենց ինքնուրույնությունը պահպանելու համար սկսում են պաշտպանվել, դառնում են ավելի փակ, ինչը բացառում է նրանց միջև հաղորդակցությունը, հետևաբար և միասնությունը: Ժողովրդավարական մշակույթում հասարակության զարգացման գործում ներդրում ունեն բոլոր ենթամշակույթները, և միասնական աշխատանքն է, որ միասնական է դարձնում հասարակությունը: Այսինքն՝ ժողովրդավարության համար կարևոր է քաղաքացիության գաղափարը, որի նախնական ձևը որոշ դեպքերում ազգի գաղափարն է: Այսինքն՝ ժողովրդավարության բացակայությունը կարող է վտանգել նաև ազգի գաղափարը: Սակայն վերը նշված երեք սկզբունքները թույլ չեն տալիս, որ մշակույթները և ենթամշակույթները տարալուծվեն, և միօրինակություն առաջանա:

Ժողովրդավարությունը միասնություն է ապահովում ոչ միայն մշակույթների, ենթամշակույթների միջև, այլ նաև նրանց ներսում: Օրինակ ոչ ժողովրդավարական մշակույթներում երգչի և հանդիսատեսի միջև միասնականություն չկա. երգչի համար երգը իր

ձայնային ընդունակությունները ցուցադրելու միջոց է: Նույնիսկ բեմական շարժումներն են տարբերվում. երգի գաղափարը երգիչը հանդիսատեսին է հանձնում որպես»բարեգործ»: Իսկ ժողովրդավարության դեպքում երգիչը ապահովում հուզական և գաղափարական միասնությունը:

Մենք ներկայացրեցինք բացարձակ ժողովրդավարական և բացարձակ ոչ ժողովրդավարական մշակույթները: Սակայն իրականում չկա ոչ բացարձակ ժողովրդավարական և ոչ էլ բացարձակ ոչ ժողովրդավարական մշակույթ: Յուրաքանչյուր մշակույթ իր մեջ ունի և՛ ժողովրդավարականը, և՛ ոչ ժողովրդավարականը: Ամեն ինչ կախված է մշակույթում այդ երկուսի համաչափությունից, այսինքն՝ ավանդականը և ժամանակակիցը պետք է հավասար մատչելիություն ունենան հասարակական գործունեության բոլոր բնագավառներում :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бобрович В. Обучение демократии: свободолюбие (мировой опыт) – 2, nmnby.eu/authors/12.html, 31.03.2010.
2. ВИКО Джамбаттиста, МЕГАЭНЦИКЛОПЕДИЯ КИРИЛЛА И МЕФОДИЯ, www.megabook.ru, 04.03.2010.
3. Гороховский С. Демократичная культура, Демократия vs, community.livejournal.com/nmnby/tag, 25.04.2010.
4. Гуревич П. Философия культуры - электронная библиотека философии. www.gumer.info, 01.12.2009.
5. Демократия. Избранные статьи. wikipedia.org., 27.02.2010.
6. Информационная теория демократии. Избранные статьи.

7. История в Энциклопедии Дидро и д'Аламбера. Перевод и примечания Н.В.Ревуненковой. Под общей редакцией А.Д.Люблинской. Л.: "Наука", 1978.

8. Либеральная демократия. Избранные статьи. wikipedia.org., 27.02.2010.

9. Нерсесянц В.С. Ш. Монтескье - Право и закон, Теория государства и права , Vuzlib.net, 27.03.2010.

10. Сатышев В. Е. Учение Т. Гоббса о государстве и праве , 1979, Материалы.- Персоналии.- Сатышев В. Е.- Книги, статьи, документы, law.edu.ru, 25.03.2010.

11. Филиппова И. А. Непосредственная демократия и ее роль в развитии общества, www.unn.ru/rus/books/vestnik3, 04.03.2010.

12. Cincotta H. Democracy In Brief, BUREAU OF INTERNATIONAL INFORMATION PROGRAMS U. S. DEPARTMENT OF STATE, 2007, www.america.gov, 25.08.2008

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ
4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն

https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788